ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2024թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԴԱՎԻԹ ՍԵԴՐԱԿՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն հայ ականավոր գիտնական, աստղաֆիզիկոս Դավիթ Սեդրակյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Հանրապետության փողոցի հ.82Ա հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԴԱՎԻԹ ՍԵԴՐԱԿՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայ ականավոր գիտնական, աստղաֆիզիկոս Դավիթ Սեդրակյանը ծնվել է 1938 թվականի դեկտեմբերի 9-ին, Երևանում:

1946-1956 թվականներին սովորել և ոսկե մեդալով ավարտել է Երևանի Մ. Գորկու անվան միջնակարգ դպրոցը:

1956-1961 թվականներին սովորել և կարմիր դիպլոմով ավարտել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը:

1964-1975 թվականներին եղել է Երևանի պետական համալսարանի տեսական ֆիզիկայի ամբիոնի դոցենտ, 1975-1977 թվականներին՝ Երևանի պետական համալսարանի տեսական ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր, 1977-1986 թվականներին՝ Երևանի պետական համալսարանի ընդհանուր ֆիզիկայի ամբիոնի վարիչ: 1986-1990 թվականներին՝ ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս-քարտուղար: 1990-1994 թվականներին՝ ՀԽՍՀ ԳԱ (հետագայում ՀՀ ԳԱԱ) առաջին փոխնախագահ: 1994-2013 թվականներին՝ Երևանի պետական համալսարանի ընդհանուր ֆիզիկայի ամբիոնի վարիչ: ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի պրոբլեմների խորհրդատու նախագահ: 2013 թվականից ԵՊՀ Վ. Համբարձումյանի անվան ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր:

1982 թվականից եղել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 1990 թվականից՝ ակադեմիկոս, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր (1972), պրոֆեսոր (1975):

Սեդրակյանի աշխատությունները վերաբերում են ճառագայթման տեսության գրավիտացիայի և տեսական աստղաֆիզիկայի բնագավառներին:

Դ. Սեդրակյանը մահացել է 2019 թվականի դեկտեմբերի 1-ին:

Դ. Սեդրակյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Հանրապետության փողոցի հ.82Ա հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացվել է նրա որդու՝ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Արմեն Սեդրակյանի, Երևանի պետական համալսարանի ռեկտորի և ՀՀ ԳԱԱ նախագահի կողմից: Հուշատախտակի տեղադրման ֆինանսական ծախսերը կատարվելու է ընտանիքի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ